**ՏԵՂԵԿԱՑՈՒՄ**

**Սարչապետ համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ**

| **Համայնքը** | **Միջոցառման անվանումը** | **Օրը** | **Ժամը** | **Անցկացման վայրը** |
|---|---|---|---|---|
| Սարչապետ | Ավագանու հերթական նիստ | 15.07.2022թ. | 11:00 | Սարչապետի համայնքապետարանի վարչական շենք, ավագանու նստավայր (ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, փ.1, շենք 67) |

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2022թ. հուլիսի 15-ին՝ ժամը 11:00-ին Սարչապետի համայնքապետարանի նիստերի դահլիճում կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի

11.07.2022թ.

1. Սարչապետ համայնքի ավագանու 2022թ. հուլիսի 15-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին: (Զեկ. Բ. Բարոյան)
2. Սարչապետ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 57-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին (Զեկ. Ս. Բարսեղյան)
3. Սարչապետ համայնքի 2022 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի կատարման վերաբերյալ հաղորդման մասին: (Զեկ. Ս.Բարսեղյան)
4. Սարչապետ համայնքի 2022 թվականի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին: (Զեկ. Ն. Բարոյան)
5. Սարչապետ համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը հաստատելու մասին: (Զեկ. Ն. Բարոյան)
6. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին (Զեկ. Ն. Բարոյան)

**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

"___" __________ 2022 թվականի N ____

## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝

***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.***

1. Հաստատել Սարչապետ համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 15-ի թիվ 09 հերթական նիստի հետևյալ օրակարգը ՝

1) Սարչապետ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 57-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին (Զեկ. Ս. Բարսեղյան)

2) Սարչապետ համայնքի 2022 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի կատարման վերաբերյալ հաղորդման մասին: (Զեկ. Ս.Բարսեղյան)

3) Սարչապետ համայնքի 2022 թվականի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին: (Զեկ. Ն. Բարոյան)

4) Սարչապետ համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը հաստատելու մասին: (Զեկ. Ն. Բարոյան)

5) Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին: (Զեկ. Ն. Բարոյան)

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

"___" ___________ 2022 թվականի N ____ - Ն

## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 57-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածներով՝

***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.***

1. Սարչապետ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 57-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն թիվ 1-6 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

"___" ___________ 2022 թվականի N ____

## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝

***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.***

1. Սարչապետ համայնքի 2022 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի կատարման վերաբերյալ հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

"___" ___________ 2022 թվականի N ____

## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով 2022 թվականի մայիս ամսվա ընթացքում գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում ստացած 1 (մեկ) հողակտորի վկայականը՝

***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.***

1. Հաստատել Սարչապետ համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

Նախագիծ
Հավելված
ՀՀ Լոռու մարզի Սարչապետ
համայնքի ավագանու
2022 թվականի  -ի թիվ  -Ա որոշման

| Հ/Հ | ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ | ՀՈՂԱՏԵՍՔԸ | ՄԱԿԵՐԵՍԻ ՉԱՓԸ/ՀԱ | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|
| 1 | 06-067-0107-0008 | այլ հողեր | 0.072585 | օտարված |

**Համայնքի ղեկավար՝** **Բ. Բարոյան**

**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

"___" ___________ 2022 թվականի N ____

## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին>> N-656 որոշմամբ՝

***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.***

1. Հաստատել Սարչապետ համայնքի հողային հաշվեկշիռը՝ 2022 թվականի հուլիսի 01-ի դրությամբ՝ համաձայն Ձև 22-ի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

"___" __________ 2022 թվականի N ____

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 08-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.***

1. Բարելավել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

Նախագիծ
Հավելված
ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի ավագանու
2022 թվականի ---- --ի N -- Ա որոշման

**ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ**

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ**

1. Բարսեղյան Ֆենյա Սերոբի (բնակավայր Սարչապետ) ----- (-----) ՀՀ դրամ (սոց. օգնություն)
2. Մկրտչյան Նարինե (բնակավայր Նորաշեն) ----- (------) ՀՀ դրամ (սոց. օգնություն)

Ընդամենը՝ ---------(-----------) ՀՀ դրամ: